ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Դ. Մ. ԴՆՂԱՄՅԱՆ

Պատերազմի առաջին օրերից հանրապետությունում խոշոր աշխատանքներ ծավալվեցին թիկունքի աշխատանքները ռազմաճակատի պահանջներին համապատասխան վերակառուցելու ուղղությամբ։ Անհրաժեշտ էր ապահովել զորահավաքը, բասակ մեկնածներին փոխարինելու համար կադրեր ընտրել, ռազմաճակատի պահանջներին համապատասխան ընդլայնել արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքը, հոգ տանել երկաթուղիների, գործարանների, կոլտնտեսությունների անվտանգության և անխափան աշխատանքի համար, կազմակերպել հակաօդային պաշտպանություն և այլն։

1941 թ. հունիսի 30-ին ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե։ Թիկունքային հանրապետություններում, այդ թվում և Հայաստանում, ժողկոմխորհին կից ստեղծվեց մեծ լիազորություններով օժտված հատուկ կարգադրիչ մարմին՝ «Փոքր ժողկոմխորհի նիստ» անունով, որը ղեկավարում էր ռազմական արդյունաբերության աշխատանքները, ապահովում ռազմաճակատի պատվերների կատարումը։

Նախապատերազմյան տարիներին հանրապետության արդյունաբերության կարևոր ճյուղերը հիմնականում ձևավորվել էին մյուս հանրապետություններից (հիմնականում Ռուսաստանից) ստացվող մեքենաների և հումքի շնորհիվ։ Պատերազմի հետևանքով խախտվեցին տնտեսական զարգացման կապերը և նվազեց հումքի ու վառելիքի մատակարարումը։ Դա բավական ծանր վիճակ ստեղծեց։ Նուտով վերանայվեցին պատերազմից առաջ հաստատված երրորդ և չորրորդ եռամսյակների տնտեսական զարգացման պլանները, սահմանվեցին արդյունաբերության խնդիրներն ու արտադրանքի ծավալը, գյուղատնտեսության, տրանսպորտի, կապիտալ շինարարության խնդիրները, կարգավորվեցին աշխատանքի, աշխատավարձի և այլ հարցեր։ Հիմնական ուշադրությունը դարձվեց ներքին պաշարների օգտագործման և խնայողության հարցերի վրա։

Վառելիքային ճգնաժամը մեղմացնելու նպատակով սեղմ ժամկետում կազմակերպվեցին Ջաջուռի գորշ ածխի, տորֆի արտադրությունը, որպես վառելանյութ բամբակի ցողունների ու խաշողի վազերի մթերումը և այլ աշխատանքներ։ Իրենց աշխատանքները վերակառուցեցին Ալավերդու և Կապանի հանքափորներն ու մետաղամշակողները։ Պղնձարդյունաբերողները 1941 թ. դեկտեմբերի 5-ին կատարեցին տարեկան պլանները։ Երևանի Ջերժինսկու անվան հաստոցաշինական գործարանն անցնելով 24-ժամյա բանվորական հերթափոխի, առաջինը ձեռնարկեց ռազմամթերքի արտադրությունը։ Սեղմ ժամկետում վերակառուցվեցին և ռազմական արտադրանք սկսեցին տալ Երևանի մեխանիկական, կարբիդի գործարանները, քիմիական կոմբինատը, Դյումրիի մեխանիկական գործարանը, Վանաձորի քիմիական կոմբինատը և այլ ձեռնարկություններ[1]։ 1941 թ. վերջին հանրապետության արդյունաբերությունը 12 անուն զինամթերք էր արտադրում (տարբեր տեսակի ականների պատյաններ, պայթուցիկներ և այլն)։ Բացի այդ, զգալի աշխատանքներ կա-

---

1 Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՆՊՊԿԱ), ֆ. 113, ց. 9, գ. 100, թ. 64։

տարվեցին նաև զումակային և ինժեներային-հրետանային ծառայության դույլի, կապի իրերի, հակաքիմիական, հրշեջ, քողարկման և այլ նյութերի արտադրության ուղղությամբ, որի մի քանի տասնյակ տեսակներին հիմնականում մեր հանրապետությունն էր մատակարարում բանակին։ Հանրապետության աշխատավորները ռազմաճակատի կարիքների համար արտադրում էին նաև զինվորի հագուստի և գույքի 50-ից ավելի տեսակներ (շինել, կիսամուշտակ, բաճկոն, կոշիկ, սպիտակեղեն և այլն)[2]։

Հանրապետությունը սկսել էր թողարկել նաև ստրատեգիական հումք։ Գերմանիայի կողմից մեծ տարածություններ նվաճելու հետևանքով երկրի քիմիական արտադրության նվազումն ավելի էր կարևորում հանրապետությունում այդ ճյուղի ընդլայնման անհրաժեշտությունը։ Քիմիական արտադրության անընդհատ ավելացման հետ մեկտեղ (կաուստիկ սոդա, սինթետիկ կաուչուկ, կարբիդ և այլն) պատերազմի հրամայական պահանջներից ելնելով յուրացվում էր նաև նոր տեսակների արտադրանք (սոսինձ, հեղուկ քլոր, ռետինա-տեխնիկական իրեր, հակատանկային հեղուկ և այլն)։ Այդ նպատակով նորանոր արտադրամասեր էին կառուցվում, վերակառուցվում էին հները։ Քիմիական արդյունաբերության մեջ ձևավորվեցին այն նոր ճյուղերը, որոնք հումքի արտադրությունից բացի սկսեցին թողարկել նաև պատրաստի արտադրանք։ Թիկունք փոխադրված սարքավորումների օգնությամբ կառուցված արդտեխնիկա գործարանը 1942 թ. կեսերին սկսեց արտադրել ավտոդողեր։ 1943 թ. շահագործվեց Երևանի քիմիադեղագործական գործարանը, որի արտադրանքի կարիքը զգացվում էր ամենուր։ Վերսկսվեց պոլիվինիլացետատա գործարանի շինարարությունը, որը հիմնականում սկսեց արտադրանք տալ 1945 թ. և հիմք ծառայեց մի շարք քիմիական գործարաններ կառուցելու համար։ Քիմիական արտադրության խոշոր կառույցներից էր նաև Վանաձորի քիմիական պարարտանյութերի գործարանը, որը նախատեսվում էր շահագործման հանձնել 1945 թ.։ Նորանոր արտադրամասեր կառուցվեցին նաև Ալավերդու և Երևանի քիմիական գործարաններում։ Քիմիական արդյունաբերությունը մեծ թռիչք ապրեց[3]։

Դեռևս նախապատերազմյան տարիներին հանրապետությունում բավականին զարգացել էր գունավոր մետաղների և հատկապես պղնձի արտադրությունը։ Այն կենտրոնացված էր Ալավերդում և Կապանում։ Սակայն պատերազմի սկզբնական շրջանում պղնձարդյունաբերությունը խիստ անկում ապրեց տեխնիկական բազայի թուլության և որակյալ կադրերի պակասի պատճառով։ Մեծ թվով հանքագործներ ու բանվորներ ռազմաճակատ էին մեկնել, իսկ նրանց փոխարինելու եկած կանայք ու պատանիները չէին կարող սեղմ ժամկետում յուրացնել մետաղագործի ծանր մասնագիտությունը։ Կապանում, օրինակ, 1942 թ. որակյալ բանվորների 50 %-ից ավելին զորակոչվել էր բանակ։ Բացի այդ, նվազել էր նաև դրսից ստացվող քարածուխը, հրակայուն աղյուսը, հաստոցներն ու պահեստամասերը։ Չնայած պղնձարդյունաբերության վերակառուցման մասին խիստ որոշումներին, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով այն սկսեց արտադրանքն ավելացնել միայն 1944 թ. սկսած[4]։

Պատերազմի տարիներին հանրապետությունում բավական բարձր տեմպերով զարգացավ մեքենաշինությունը։ Ձևավորվեցին նոր, բարձրարդյունավետ ճյուղեր՝ հաստոցաշինությունը, սարքաշինությունը, էլեկտրամեքենաշինությունը և այլն։ 1941—45 թթ. մեքենաշինության և մետաղամշակման արտադրանքն աճեց 1,7 անգամ։ Ձերժինսկու անվան հաստոցաշինական գոր-

---

2 Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությունների փաստաթղթերի պահպանման պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀԿՓ ՊԿԱ), ֆ. 1, ց. 6, գ. 37, թ. 25։

3 Նույն տեղում, ց. 23, գ. 26, թ. 28—29։

4 ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 113, ց. 15, գ. 253, թ. 11։

ծարանը համալրվեց բարձր արտադրողական հաստոցներով ու հատուկ սարքավորումներով և 1944 թ. սկսեց թողարկել խառատային նոր հաստոցներ։ Հանրապետությունում սարքաշինական առաջնեկը Երևանի ժամացույցի գործարանն էր, որը 1943 թ. սկսեց արտադրանք տալ։ Երևանի ավտոնորոգման գործարանը համալրվեց նոր սարքավորումներով և 1944 թ. վերակառուցվեց ավտոպահեստամասերի գործարանի։ Պատերազմի տարիներին դրվեցին նաև էլեկտրամեքենաշինության և էլեկտրատեխնիկական արտադրության հիմքերը։ 1942 թ. սկսվեց Հայէլեկտրագործարանի (թիվ 447) շինարարությունը, որտեղ ծրագրվում էր արտադրել ինքնաթիռի մասեր։ Հետագայում այն դարձավ հանրապետության ամենախոշոր արտադրական միավորումներից մեկը։ 1943 թ. վերսկսվեց Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի շինարարությունը, իսկ 1944 թ.՝ պատերազմի սկզբում ընդհատված՝ Քանաքեռի ալյումինի գործարանի կառուցումը[5]։

Ինչպես տեսնում ենք, պատերազմի ծանր տարիներին հանրապետությունում արդյունաբերությունը բավական բարձր տեմպերով է զարգացել։ Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ խոշոր, հիմնական արդյունաբերական կենտրոններից բացի, նոր գործարաններ և ֆաբրիկաներ էին հիմնվում նաև մի շարք շրջկենտրոններում, որով փաստորեն ուրվագծվեցին հանրապետության արդյունաբերական զարգացման հեռանկարները (Արմավիր, Արտաշատ, Արթիկ, Սպիտակ, Կոտայք, Տավուշ և այլն)։

Հիմնական միջոցներս ու ուշադրությունը բևեռելով ծանր արդյունաբերական ձեռնարկությունները թիկունքային հանրապետություններ դուրս բերելու և գործարկելու վրա, պատերազմի սկզբնական շրջանում քիչ տեղ էր հատկացվում սննդի և թեթև արդյունաբերության ձեռնարկություններին։ Միջոցներ չկային նույնիսկ թիկունք փոխադրված գործարաններն աշխատեցնելու համար։ Այդ պայմաններում բանակի կարիքները հոգալու հիմնական ծանրությունն ընկավ թիկունքային հանրապետություններում գործող ձեռնարկությունների վրա։

Ի տարբերություն ծանր արդյունաբերության, թեթև արդյունաբերությունը հանրապետությունում արագ վերակառուցվեց և պատերազմի առաջին օրերից սկսեց արտադրել ռազմական կարիքների համար։ Արդեն մոտ հուլիս-օգոստոս ամիսներին ռազմական պատվերներով արտադրվում էր մառլյա, գուլպա, սպիտակեղեն, կոշիկ և այլն։ Այստեղ զգացվում էր հումքի, քիմիական նյութերի, սարքավորումների կարիքը, որը տեղական միջոցներով հոգալը բավականին դժվար էր։ Սակայն պատերազմը հարկադրում էր հաղթահարել բոլոր տեսակի դժվարությունները։ Թեթև արդյունաբերության աշխատողները, հիմնականում կանայք, մոբիլիզացնելով բոլոր ուժերը, կատարեցին ու գերակատարեցին պատերազմի բոլոր տարիների պատվերները։ Պատերազմի տարիներին լայնածավալ աշխատանք կատարվեց նաև սննդարդյունաբերության արտադրանքի ավելացման համար, որի կարիքը շատ մեծ էր։ Բանակի և բնակչության պահանջները բավարարելու նպատակով պատերազմի տարիներին հանրապետությունում զգալիորեն ընդլայնվեց սննդարդյունաբերությունը, յուրացվեցին արտադրության նոր տեսակներ, կառուցվեցին նոր արտադրամասեր, ավելացվեցին արտադրական կարողությունները։ Երևանի պահածոների գործարանը սկսեց մսի պահածոների արտադրությունը, Գյումրիի մսի կոմբինատը յուրացրեց բժշկական մի շարք պատրաստուկների արտադրությունը, ընդլայնվեց ծխախոտի, տնտեսական օճառի, գինու և օղու արտադրությունը[6]։ 1942 թ. վերսկսվեց Արմավիրի պահածոների գործարանի շինարարությունը, որը շուտով սկսեց արտադրանք տալ։ Ցնցած պատերազմական դժվարություններին, զգալի միջոցներ հատկացվեցին գինեգործական նոր հոսքեր տեղադրելու և շաքարի արդյունաբերությունը սկզբնա-

---

5 ՀՀ ՀԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 24, գ. 32, թ. 116։

6 Նույն տեղում, ց. 2, գ. 11, թ. 24։

վորելու համար։ Միայն 1944 թ. այդ նպատակով ծախսվեց մոտ 40 միլիոն ռուբլի[7]։ Պատերազմի վերջին տարիներին մի շարք նոր ֆաբրիկաներ ու գործարաններ կառուցվեցին Երևանում, Գյումրիում և այլ քաղաքներում, որի շնորհիվ զգալիորեն ավելացան սննդի ու թեթև արդյունաբերության տեսակներին ու արտադրանքը։ Դա հնարավորություն տվեց զգալիորեն գերակատարել պետական առաջադրանքները։ Վերակառուցված արդյունաբերությունը հետագայում որոշակի զարգացում ապրեց և հանրապետությունը որոշակի մասնակցեց զենքի, ռազմական հանդերձանքի արտադրությանը։ Պատերազմի տարիներին շահագործման հանձնվեցին 30 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն, 110 արտադրամաս, յուրացվեց շուրջ 300 արտադրատեսակի արտադրություն։ Անշուշտ, դա կատարվում էր բավական ծանր պայմաններում, երբ ամենուր զգացվում էր հումքի, բանվորական կադրերի սուր կարիքը։ Հանրապետության բանվոր դասակարգը մտավորականության հետ մեկտեղ հերոսական ճիգեր գործադրեց ռազմական պատվերները ժամանակին կատարելու համար։

Տարեցտարի ընդլայնվող արդյունաբերական ձեռնարկությունները որակյալ բանվորական կադրերով ապահովելու նպատակով պատերազմի տարիներին վերակառուցվեց նրանց պատրաստման համակարգը։ Ամենուր զգացվող բանվորների կարիքը սեղմ ժամկետում բավարարելու նպատակով կիսով չափ կրճատվեցին նախկինում գործող արհեստագործական և ֆաբրիկագործարանային ուսումնարանների ուսուցման ժամկետները։ Զգալիորեն ավելացավ դրանց քանակը։ Եթե մինչև պատերազմը 5 ուսումնարան կար, որտեղ սովորում էին մոտ 1000 պատանիներ, ապա 1944 թ. դրանց թիվը հասավ 15-ի, որտեղ 4 հազարից ավելի սովորողներ կային[8]։ Այդ հաստատությունները հաճախ բանվորական կադրեր էին պատրաստում տվյալ կոնկրետ ձեռնարկության համար։ Այսպես, Երևանի քիմիական կոմբինատին սպասարկում էր № 1 արհեստագործական ուսումնարանը, Ձերժինսկու անվան գործարանին՝ № 7 ուսումնարանը, Գյումրիի տեքստիլ կոմբինատին՝ № 1 գործարանը և այլն։ Հայրենական պատերազմի տարիներին հանրապետության աշխատանքային ռեզերվների վարչության կողմից պատրաստվեցին մոտ 10 հազար որակյալ բանվորներ։

Սակայն բանվորական կադրերի պատրաստման զանգվածային ձևը ինչպես նախկինում, այնպես էլ պատերազմի տարիներին գործարաններում ու ֆաբրիկաներում մնում էր անհատական, բրիգադային ուսուցման ձևը։ Բանվորական կադրերի պատրաստման այս ձևի արդյունավետությունը ավելի բարձր էր, որովհետև այն ղեկավարում էին արտադրության առաջավոր և մեծ փորձ ունեցող մասնագետները։ 1942 թ. օգոստոսին հանրապետության կառավարությունը հատուկ որոշում ընդունեց տեղերում անհատական, բրիգադային ուսուցում կազմակերպելու մասին։ Գյումրիի տեքստիլ կոմբինատում պատերազմի տարիներին 2200-ից ավել բարձրորակ բանվորներ պարաստվեցին։ Անմիջապես գործարաններում կադրերի պատրաստման ձևը լայն տարածված էր նաև Երևանի, Ալավերդու, Կապանի արդյունաբերական ձեռնարկություններում։ Պատերազմի տարիներին այդ միջոցով մասնագիտական որակավորում ստացան 11,5 հազար պատանիներ ու աղջիկներ, որոնց մեծ մասը փոխարինեց ռազմաճակատ մեկնածներին[9]։

Աշխատուժի արդյունավետ օգտագործման նպատակով կառավարությունը մի շարք որոշումներ ընդունեց պարտադիր աշխատանքի, արտաժամյա աշխատանքի և այլնի մասին։ Ձեռնարկված միջոցառումները հնարավորություն տվեցին անընդհատ համալրելու բանվոր դասակարգի կազմը։ Միայն 1942 թ. հանրապետությունում աշխատանքի է ընդունվել ավելի քան

7 Նույն տեղում, ց. 24, գ. 3, թ. 108։
8 Նույն տեղում, ց. 31, գ. 54, թ. 44։
9 ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 163, ց. 11, գ. 24, թ. 18։

16 հազար բանվոր, որոնց կեսից ավելին կանայք էին[10]։ Զնայած պատերազմի տարիներին կոլտնտեսային գյուղացիությունը նույնպես զգալիորեն նվազել էր և այնտեղ ևս զգացվում էր աշխատողների պակասը։ Բանվորական կադրերը հիմնականում հավաքագրվում էին գյուղերից։ Ժողտնտեսությունում ստեղծված բանվորական ուժերի հաշվառման, մոբիլիզացման-վերաբաշխման բյուրոն, հաշվի առնելով տվյալ արդյունաբերական ձեռնարկության աշխատուժի կարիքը, հիմնականում շրջակա գյուղերից բանվորական ուժեր էր հավաքագրում, կազմակերպում նրանց ուսուցումը։ 1942 թ. այդ բյուրոն 185 հազար գյուղական բնակիչների հավաքագրեց արդյունաբերական ձեռնարկությունների աշխատելու համար։ Բացի այդ, բանվորական ուժը համալրվում էր նաև գերմանացիների զավթած ԽՍՀՄ տարբեր շրջաններից Հայաստան փոխադրվածներին աշխատանքի տեղավորելու միջոցով։ 1942 թ. դրանց թիվը հասնում էր 22 հազարի, որոնց մեջ քիչ չէին բարձրորակ կադրեր ու մասնագետներ։ Աշխատանքի էին ընդունվում նաև թոշակառուները, հաշմանդամները և ուրիշներ։ Այդ բոլորով հանդերձ ամենուր աշխատողների կարիք էր զգացվում և բանվորները հաճախ 16—18 ժամ չէ՛ն հեռանում գործարաններից։

Այսպիսով, արդյունաբերությունը որակյալ կադրերով ապահովելու նպատակով վերակառուցվեց ու ընդլայնվեց նրանց վերապատրաստման ողջ համակարգը։ Մեծ ջանքեր գործադրվեցին արդյունաբերական ձեռնարկությունների անխափան աշխատանքն ապահովելու, պետական առաջադրանքները կատարելու համար։ Հանրապետության արդյունաբերությունը պատերազմի տարիներին սեղմ ժամկետում վերակառուցվեց և սկսեց ռազմական արտադրանքի թողարկումը։ 1944 թ. 25 անուն զենք ու զինամթերք էր արտադրվում։ Պատերազմական ծանր պայմաններում Հայաստանում տասնյակ ֆաբրիկաներ ու գործարաններ կառուցվեցին, նոր արտադրամասեր շահագործվեցին, որը հնարավորություն տվեց զգալիորեն ավելացնելու արտադրանքի քանակն ու տեսակները, կատարելու ռազմաճակատի պատվերները։

Պատերազմը նոր և ծանր խնդիր դրեց կոլտնտեսային գյուղացիության առջև։ Անհրաժեշտ էր օգտագործել բոլոր հնարավորությունները ռազմաճակատին անխափան մատակարարումներ կատարելու համար։ Խնդիր էր դրվում ընդարձակել հատկապես հացահատիկի, տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունները, ավելացնել անասունների գլխաքանակը, բարձրացնել բերքատվությունն ու մթերատվությունը։ Թիկունքային հանրապետությունները, այդ թվում և Հայաստանը, պետք է բավարարեին իրենց արտադրանքը, որպեսզի կարողանային արտաղրել նաև թշնամու զավթած գյուղատնտեսական շատ կարևոր շրջանների փոխարեն։ Դա շատ դժվար խնդիր էր, մանավանդ որ պատերազմի պատճառով ամենուր զգացվում էր կադրերի ու մասնագետների, գյուղմեխանիզատորների կարիքը, նվազել էր կոլտնտեսությունների բանվորական ուժը։ Գյուղում մեծ դժվարություն էր առաջացել պահեստամասերի և տեխնիկայի ձեռքբերման, վերանորոգման գործում, վառելանյութի պակասության պատճառով և այլն։ Այդ բոլորի փոխարեն նորից ձեռքի ծանր և անհրապույր աշխատանքն էր դարձել գյուղատնտեսական արտադրության վճռող ուժը և այդ ծանր բեռն իրենց թույլ ուսերի վրա էին վերցրել կանայք, ծերերն ու անչափահասները։

1941 թ. բերքահավաքը տեղի էր ունենում պատերազմի պայմաններում։ Հատուկ միջոցառումներ մշակվեցին այն ժամանակին ու անկորուստ անցկացնելու համար. «Բերքահավաքի ժամանակ կորուստներ թույլ տալը,—գրում էին գյուղացիները,—մանավանդ այժմ, պատերազմի օրերին, հանցագործություն է»[11]։ Այսպես էին մտածում բոլորը։ Բերքահավաքի աշխատանքները հաջող կազմակերպելու նպատակով ժամանակավորապես հավաքագրվում էր նաև

10 ՀՀ ՀԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 81, գ. 6, թ. 142։

11 Սովետական Հայաստան, 28. VI. 1941։

քաղաքի աշխատունակ բնակչությունը։ Այդ համընդհանուր շարժումը ընդգրկել էր բոլորին։ Եթե մեծահասակները զբաղվում էին բերքահավաքով, ապա անչափահասները՝ հասկահավաքով, մեծերի հետ միասին անասուններ էին խնամում, կեր էին կուտակում և այլն։ Աշտարակի Եղվարդ գյուղից հաղորդում էին. «Մեր կոլխոզից ղդալի թվով երիտասարդներ մեկնեցին ռազմաճակատ։ Նրանց փոխարինողներ եղան հարյուրավոր հայրենասեր կանայք, մեծահասակներ ու պատանիներ։ Աշխատաջի ընդունակ բոլոր կոլխոզնիկները մասնակցում են բերքահավաքին։ Չկա ավելի մեծ և պատվավոր գործ քան մեր սրբազան հայրենիքի պաշտպանությունը»[12]։

Հայ կանանց եռանդն ու կորովը համախմբելու, նրանց աշխատանքներն ավելի նպատակամղված դարձնելու գործում կարևոր նշանակություն ունեցավ Երևանի արտադրական ձեռնարկությունների մի խումբ կանանց 1941 թ. հունիսի 26-ի բաց նամակը՝ ուղղված Հայաստանի բոլոր կանանց։ «Այժմ հասել է ժամը,—գրված է այնտեղ,—երբ մեր երկրի բոլոր կանայք պետք է մեկ մարդու նման դուրս գան պայքարի, գործարանում թե կոլխոզում, հիմնարկում թե ճակատում զենքը ձեռքին օգնեն մեր կարմիր բանակին՝ գազազած թշնամուն մինչև վերջ ջախջախելու համար»[13], Նույնպիսի նամակով հանրապետության կանանց դիմեցին Գյումրիի մանածագործարանի կանայք, Ստեփանավանի, Տաշիրի անասնապահները, Սևանի ավազանի ծխախոտագործները։ Այդ կոչերին ու դիմումներին գյուղացիությունը պատասխանում էր կոնկրետ աշխատանքով։ Եթե Վարդենիսի շրջանի կոլտնտեսություններում 1941 թ. հունիսի կեսերին 2525 կին էին աշխատում, ապա մեկ ամիս անց (պատերազմը սկսվելուց հետո)՝ 4350 կին[14]։ Հանրապետությունում լայն արձագանք տվեց Մարտունու շրջանի 21 կոմերիտուհիների դիմումը՝ իրենց գործուղելու կոլտնտեսություններում որպես մեխանիզատոր աշխատելու համար։ «Եթե Հայրենիքը պահանջի,—գրում էին նրանք,—տրակտորի ղեկից մենք կանցնենք տանկերի վրա և Կարմիր բանակի մարտական շարքերում կմարտնչենք Հիտլերի ավազակային բանդաների դեմ»[15]։ Թումանյանի շրջանի Հագվի գյուղի կոլտնտեսուհի Անուշ Օհանյանը, որի 10 որդիները և 5 թոռներ կռվում էին թշնամու դեմ, որդիներից մեկին գրում էր. «Թշնամին մեզ վրա է հարձակվել, ուզում է քանդել իմ օջախը, անպատվել իմ հարսներին, կոտորել իմ զավակներին, որբացնել իմ թոռներին։ Եթե մենք նրան չդիմադրենք, ով պետք է դիմադրի։ Դու քո 10 եղբայրներով դիմացեք ծանր վերքերին, քաջ կռվեցեք ու բարձր պահեք Օհանյանների գերդաստանի պատիվը... Մենք բոլորս էլ աշխատում ենք կոլխոզում։ Ես անասնապահական ֆերմայի կթվոր եմ, ունեմ 180 աշխոր»[16]։

Պատերազմի նախօրյակին Հայաստանում կար 1038 կոլտնտեսություն, 15 սովխոզ։ Համատարած կոլեկտիվացման ավարտությունները աստիճանաբար վերականգնելով գյուղացիությունը հարկադրված էր համակերպվել և ամրապնդել եղած տնտեսությունները, ձևավորել օղակներ, բրիգադներ, ընդլայնել ցանքատարածությունները, ավելացնել անասունների գլխաքանակը։ Բռնությամբ ու դաժանություններով ձևավորված գյուղատնտեսական ձեռնարկությունները սկսել էին աշխատել, տալ առաջին պտուղները։

Պատերազմն սկսվեց գյուղատնտեսական աշխատանքների ամենաեռուն շրջանում։ Չնայած աշխատուժի կրճատմանը, հանրապետությունում կազմակերպված և սեղմ ժամկետում ավարտվեցին 1941 թ. բերքահավաքն ու մյուս աշխատանքները։ Ժամկետից 20 օր շուտ կատարվեցին հացահատիկի, մսի, կաթնամթերքի, կարտոֆիլի մթերումները։ Հարթավայրային և նախալեռնային

---

12 Նույն տեղում, 11. VII. 1941։

13 Նույն տեղում, 26. VI. 1941։

14 Նույն տեղում, 12. VII. 1941։

15 Նույն տեղում, 26. VI. 1942։

16 Նույն տեղում, 1. XI. 1942։

շրջանները հաջողությամբ կատարեցին նաև 1941 թ. աշնանացանը, զգալի չափով ընդլայնելով ցանքատարածությունները։

Սակայն թիկունքի աշխատանքների հաջողությունները մեծ չափերով կախված էին կադրերից։ Ռազմաճակատ մեկնածներին փոխարինողներ պատրաստելու նպատակով 1941 թ. հանրապետությունում կազմակերպվեցին մեխանիզատորների, օղակավարների, բրիգադավարների, ֆերմաների վարիչների և կոլտնտեսությունների նախագահների կարճատև դասընթացները, որտեղ պարապմունքներն անցկացնում էին գյուղատնտեսական բուհերի և համապատասխան գերատեսչությունների լավագույն մասնագետները[17]։

Պատերազմը փոխեց գյուղական բնակչության սոցիալական կառուցվածքը։ Գյուղական բնակչությունից մոտ 100 հազար մարդ զորակոչվել էր գործող բանակ։ Գյուղում խիստ նվազել էր աշխատունակ մարդկանց քանակը։ Այսպես, Թումանյանի շրջանի Օձուն գյուղից զորակոչվել էր 757 մարդ, Իջևանի Սևքար գյուղից՝ 574, Նոյեմբերյանի Կողբ գյուղից՝ 445 և այլն։ Երիտասարդության բացակայությունը (հատկապես տղամարդկանց) գյուղատնտեսական աշխատանքների ոչ միայն ղեկավարման, այլև կատարման հիմնական ծանրությունը դրեց կանանց ու դեռահասների վրա։ Եթե 1940 թ. հանրապետության գյուղական վայրերում ապրող 146 հազար կանանցից 123 հազարն էր մասնակցել գյուղատնտեսական աշխատանքներին, ապա 1942 թ. 150 հազար կանանցից՝ 147 հազարը։ Նույնն էր գյուղատնտեսական աշխատանքներին անչափահասների մասնակցության պատկերը։ Եթե 1940 թ. 186 հազար անչափահասներից 84 հազարն էր մասնակցել, ապա 1942 թ. նույնքան դեռահասներից 122 հազարը։ Դեռահասների տարեկան աշխօրերի քանակը կրկնապատիկ ավելացավ[18]։

Գյուղում հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում հացահատիկի արտադրության ավելացմանը։ Հանրապետությունը սովորաբար հաց էր ներմուծում իր կարիքները բավարարելու համար։ Պատերազմի տարիներին հանրապետությունը կարողացավ ոչ միայն իրեն բավարարել հացով, այլև զգալի քանակությամբ հացահատիկ հանձնել պետությանը, օգնել ռազմական կարիքների բավարարմանը։ Այդ նպատակով պատերազմի տարիներին զգալի չափով կրճատվեցին բամբակի, անասնակերի ցանքատարածությունները և ավելացան հացահատիկի ու ծխախոտի մշակման դաշտերը։

1942 թ. երկրորդ կեսից ծանր և տագնապալի վիճակ ստեղծվեց Անդրկովկասի համար։ Գերմանական զորքերը հասել էին Կովկասի մատույցներին և փորձում էին ներխուժել Անդրկովկաս։ Այդ ժամանակ բազմամարդ հակաֆաշիստական համահավաքներ էին տեղի ունենում Անդրկովկասի գյուղերում ու քաղաքներում։ Օգոստոսի 23-ին Թբիլիսիում տեղի ունեցավ անդրկովկասյան ժողովուրդների ներկայացուցիչների հակաֆաշիստական համահավաքը, որը հատուկ կոչով դիմեց ինչպես ռազմաճակատի զավակներին, այնպես էլ թիկունքի աշխատողներին՝ էլ ավելի լարված աշխատանքով բազմապատկելու երկրի տնտեսական հզորությունը և արժանի հակահարված տալու թշնամուն։

Հայաստանի գյուղատնտեսության աշխատողները հավանություն տալով այդ դիմումին, 1942 թ. համար նոր պարտավորություններ ստանձնեցին։ Աբովյանի շրջանի 30 կոլտնտեսություններ հուլիսի կեսերից սկսած պետությանն էին հանձնում հացահատիկը և հետագայում զգալի չափով ավելի մթերեցին։ Շահումյանի շրջանի կոլտնտեսությունները հուլիսի կեսերից ավարտեցին հացահատիկի բերքահավաքը և զգալիորեն գերակատարեցին պետական պարտավորությունները։ 1942 թ. դաշտավարական կուլտուրաների բերքահավաքը սեղմ ժամկետում և առանց կորուստների հավաքեցին Էջմիածնի, Գուգարքի, Աշտարակի, Գորիսի, Սիսիանի և այլ շրջանների տնտեսությունները։ Հոկտեմբերի սկզբներին հանրապետության բոլոր կոլտնտեսու-

---

17 ՀՀ ՀԿՓ ԿՊԱ, ֆ. 122, ց. 3, գ. 41, թ. 35։

18 Նույն տեղում, ֆ. 1, ց. 33, գ. 1, թ. 28—29։

թյունները չնչին բացառությամբ կատարել և գերակատարել էին պլանով նախատեսված մթերումները։

Կոլտնտեսությունները կազմակերպված աշխատանքներ կատարեցին նաև հաջորդ տարվա ցանքի նախապատրաստման և անցկացման համար։ Տնտեսություններին մեծ օգնություն էին ցույց տալիս ՄՏԿ աշխատողները, որոնք բավական ծանր պայմաններում կարողանում էին ժամանակին նորոգել գյուղատնտեսական մեքենաները և կատարել աշխատանքները։ 1943 թ. նույնպես հացահատիկային կուլտուրաների բարձր բերք ստացվեց։ Բացի պետական բոլոր պարտավորությունները կատարելուց, էջմիածնի, Թումանյանի, Աշոցքի, Կապանի և այլ շրջաններում բավական բարձր վարձատրություն տվեցին կոլտնտեսականներին, վաստակած աշխօրերին բաշխելով մեծ քանակությամբ գրամ, հացահատիկ, յուղ, պանիր և այլ մթերքներ։ Հայ գյուղացին հիմնականում կարողացավ խուսափել սովի ճիրաններից։

Հացահատիկային կուլտուրաների գծով 1940 թ. համեմատությամբ 1943 թ. բերքատվությունն աճեց 12 %-ով, կարտոֆիլինը՝ 25 %, մսինը՝ 24 և այլն։ Մեկ միլիոնից ավել եկամուտներ ունեցող կոլտնտեսությունների թիվն անցել էր 100-ից։ 1943 թ. պետական պարտավորություններից բացի կոլտնտեսությունները պաշտպանության պետական ֆոնդ մուծեցին 123 հազար փութ հացահատիկ և կարտոֆիլ[19]։

Ռազմաճակատում 1944 թ. տարած փայլուն հաղթանակները հնարավորություն ընձեռեցին որոշ չափով արտադրել նաև գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ, պահեստամասեր։ Ավելացվեցին նաև գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումների չափերը։ Եթե 1943 թ. Հայաստանի գյուղատնտեսությանը հատկացվել էր 12,6 միլիոն ռուբլի, ապա 1944 թ.՝ 21,7 միլիոն։ Դրա զգալի մասը նախատեսվում էր ուղղել ջրանցքաշինարարական աշխատանքներին։ Լարված և հետևողական աշխատանքներ ծավալվեցին 1944 թ. բերքահավաքը սեղմ ժամկետում անցկացնելու համար։ Շահումյանի, Գորիսի, Արտաշատի, Աբովյանի շրջաններում 10—15 օր շուտ ավարտվեցին բերքահավաքի աշխատանքները։ 1944 թ. հացահատիկի հանձնման պետական պլանը Հանրապետության կոլտնտեսությունները կատարեցին 107 %-ով։ Արտապլանային կարգով կարմիր բանակի ֆոնդ մուծվեց 200 հազար փութ հացահատիկ[20]։

Պատերազմի տարիներին գյուղատնտեսական մթերքների և առաջին հերթին հացահատիկի արտադրության ավելացմանը նպաստում էր նաև այն, որ թույլատրվեց լայնորեն կիրառել վարձատրության գործավարձային սկզբունքը, որը բարձրացնում էր աշխատողների շահագրգռվածությունը։ Չնայած դա արվում էր օղակի մակարդակով, երբ նույն կոլտնտեսության բարձր նվաճումների հասած օղակի անդամները ավելի շատ էին վարձատրվում, քան վատ աշխատած օղակները՝ այն կարևոր խթանիչ նշանակություն ունեցավ, քանի որ նախկինում ամբողջ կոլտնտեսությունում բոլորը հավասար էին վարձատրվում։ Ըստ էության, դա որոշակի պայքար էր արմատացած հավասարության դեմ, որից մեծ մասամբ օգտվում էին վատ աշխատողներն ու ծույլերը։ Դժբախտաբար այդ խելացի սկզբունքը հետագայում չամրապընդվեց։

Պատերազմի տարիներին որոշակի փոփոխություններ տեղի ունեցան հանրապետության գյուղատնտեսության ցանքատարածությունների կառուցվածքում։ Մոտ 32 հազար հեկտարով ավելացավ հացահատիկի ցանքատարածությունը, որը անշուշտ բացասաբար անդրադարձավ գյուղատնտեսական մյուս ճյուղերի զարգացման վրա։ Հիմնական ուշադրությունը հացահատիկի արտադրության ավելացման վրա դարձնելու պատճառով հատկապես պատերազմի առաջին տարիներին անհրաժեշտ աշխատանքներ չտարվեցին այգե-

19 Նույն տեղում, թ. 32։

20 Նույն տեղում, ֆ. 90, ց. 4, գ. 348, 14։

գործության և խաղողագործության զարգացման ուղղությամբ։ Ավելին, զգալիորեն կրճատվեցին դրանց տարածությունները և նվազեց բերքատվությունը։

Այգեգործության վիճակը բարելավելու նպատակով աշխատանքներ կատարվեցին ոռոգելի հողատարածություններն ընդարձակելու ուղղությամբ։ 1943 թ. սկսած վերսկսվեց Զանգվի, Աղիամանի, Թալինի և Օձունի ջրանցքների շինարարությունը։ Պետական հատկացումներից բացի, այդ աշխատանքների ծավալման համար զգալի չափով կապիտալ ներդրումներ կատարեցին նաև կոլտնտեսությունները։ Աշխատանքի հիմնական ծանրությունն ընկավ կոլտնտեսականների վրա, որոնց օգնում էին բանվոր-ծառայողներն ու ուսանողները։ Պատերազմի ծանր տարիներին Թումանյանի, Ստեփանավանի, Կալինինոյի շրջանների կոլտնտեսականների ուժերով ավարտվեց Լոռվա ջրանցքի շինարարությունը։ Երևանի ուսանողության և բանվոր-ծառայողների ուժերով կառուցվեց Նորքի ջրանցքի առաջին հերթը։ Ընդհանրապես պատերազմի տարիներին հանրապետությունում ոռոգելի հողատարածություններն ավելացան շուրջ 27 հազար հեկտարով, որի մեծ մասը հատկացվեց այգեգործությանն ու տեխնիկական կուլտուրայի մշակմանը։ Էջմիածնի, Արտաշատի, Արմավիրի կոլտնտեսություններում և սովխոզներում այգիների տարածության ընդլայնման հետ մեկտեղ զգալի չափով բարձրացավ նաև բերքատվությունը, հետևաբար և տնտեսությունների եկամտաբերությունը։ Հանրապետության համար կարևոր էր նաև այն հանգամանքը, որ այգեգործությամբ սկսում էին զբաղվել նախալեռնային և լեռնային շրջանները, որի շնորհիվ ավելանում էին նրանց եկամուտները, ամրապնդվում տնտեսությունը և գյուղացիների աննշան քանակն էր հեռանում գյուղերից։ Քանի որ այգեգործության համար անհրաժեշտ դեղանյութեր այլևս դրսից չէին ստացվում, անհրաժեշտ էր հանրապետությունում ծավալել այգիների մշակման և վնասատուների դեմ պայքարելու համար քիմիական նյութերի արտադրությունը։ Հայաստանի գործարաններում պատերազմի տարիներին տեղական կարիքները բավարարելու համար սկսվեց ծծմբաթթվի կալցիումի, նիկոտինի, սուլֆատի, ֆորմալինի, պղնձարջասպի և այլ նյութերի արտադրությունը։ Հետագայում դա մեծ զարգացում ապրեց և հանրապետությունը թունաքիմիկատներով իր կարիքները բավարարելուց բացի սկսեց նաև արտահանել։

Պատերազմի տարիներին հանրապետությունում բավական ընդարձակվեց բանջարաբոստանային կուլտուրաների և հատկապես կարտոֆիլի մշակությունը։ Եթե 1940 թ. հանրապետությունում ցանվել էր մոտ 7000 հեկտար կարտոֆիլ, ապա 1945 թ. այդ տարածությունները հասան 11,6 հազար հեկտարի[21]։ Կարտոֆիլի բարձր բերք էին ստանում Ստեփանավանի, Կալինինոյի, Սևանի ավազանի շրջանների կոլտնտեսությունները։ Միայն 1944 թ. հանրապետության կոլտնտեսություններն ու սովխոզները պետությանը հանձնեցին [illegible].5 հազար տոննա կարտոֆիլ, ավելի քան 1,5 հազար տոննա բանջարեղեն։ Պատերազմի տարիներին գրեթե կրկնապատկվեց բանջարաբոստանային կուլտուրաների ոռոգատարածությունը։ Այն 1940 թ. 12 հազար հեկտարից 1945 թ. հասավ 22 հազար հեկտարի։

Համատարած կոլեկտիվացման տարիների անասնաջարդի հետևանքով անասունների դլխաքանակը չէր վերականգնվել, երբ սկսվեց պատերազմը։ Հատկապես մեծ չափով էր զգացվում քաշող ուժի կարիքը։ 1941 թ. ձմեռը հանրապետությունում լավ կազմակերպվեց անասունների խնամքը, կատարվեցին պետական պարտավորությունները և շատ տնտեսություններում զգալի չափով անասնապահական մթերքներ բաշխեցին։ Չնայած 1941 թ. հաջող ձմեռացման աշխատանքներին, հաջորդ տարին հանրապետության անասնաբուծությունը բավականին ծանր վիճակի մեջ ընկավ, որի հիմնական պատճառն այն էր, որ հացի և տեխնիկական կուլտուրաների ցանքատարա-

21 Նույն տեղում, ֆ. 30, ց. 37, գ. 97, թ. 6։

ծության ավելացման հետևանքով բավական կրճատվել էր անասնակերի ցանքատարածությունը, նվազել արտադրությունը։ Բացի այդ, պակասել էր նաև խտացված կերերի արտադրությունն ու ստացումը։ Ընդհանուր առմամբ վատացել էր նաև անասունների խնամքը։ Դա բավական դժվար բնագավառ էր և կանայք ու պատանիները միշտ չէ, որ կարողանում էին հաջողությամբ փոխարինել մասնագետներին։ Այդ բոլորի հետևանքով նվազեց անասունների գլխաքանակը, մթերատվությունը և հանրապետությունը չկարողացավ կատարել պետական պարտավորությունները։ 1942 թ. պլանով նախատեսված 340 հազար խոշոր եղջերավոր անասունների դիմաց փաստորեն կար 265 հազար, որից կովը՝ 66 հազարի փոխարեն մոտ 48 հազար, մանր եղջերավոր անասունները՝ 260 հազարի փոխարեն՝ 240 հազար[22]։ Դա զգալիորեն պակաս էր 1941 թ. ցուցանիշներից։ Ստեղծված ծանր վիճակը բարելավելու, բնակչության շահագրգռվածությունը խթանելու նպատակով որոշվեց մի շարք արտոնություններ սահմանել անասնապահության և անասնակերի հայթայթման բնագավառներում աշխատողների համար։ Կարմիր բանակի հաջողություններին համապատասխան, որոշ չափով ավելացավ նաև խտացած և հյութալի կերի ստացումը։ Ձեռնարկված միջոցառումները զուր չանցան։ 1943 թ. հանրապետության անասնապահության վիճակը զգալիորեն բարելավվեց։ Հատկապես բարձր ցուցանիշների հասան Ստեփանավանի, Տաշիրի, Իջևանի, Գորիսի և մի քանի այլ շրջանների անասնապահները։ Այստեղ զգալիորեն ավելացավ անասունների գլխաքանակը, բարձրացավ մթերատվությունը։ Այդ նվաճումների մեջ անգնահատելի էր Լոռու տոհմաբուծական սովխոզի դերը, որտեղ անասնաբուծական մթերքների արտադրության բարձր և կայուն մակարդակը ավանդական էր դարձել։ 1944 թ. հունվարին շրջանում կար 16 հազարից ավելի խոշոր եղջերավոր, մոտ 15,5 հազար մանր եղջերավոր անասուն և 2000-ից ավելի ձի։ Բարելավվեց նաև մյուս շրջանների վիճակը։ Պատերազմի տարիներին Ստեփանավանի շրջանի կոլտնտեսություններում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն աճեց 1036-ով, մանր եղջերավորներինը՝ 3600-ով, ամրապնդվեց կերարտադրության բազան։ Գլխաքանակի ավելացման հետ մեկտեղ, ստեփանավանցիներն անընդհատ ավելացնում էին նաև անասունների մթերատվությունը։ Բարձր ցուցանիշների հասնելու և պետական պարտավորությունները միշտ գերակատարելու համար ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշմամբ 1943 թ. Ստեփանավանի շրջանին հանձնվեց պաշտպանության պետական փոխանցիկ Կարմիր դրոշը և դրամական պարգև։ Բարձր ցուցանիշների հասան նաև Աշոցքի, Հրազդանի և Իջևանի շրջանները։

1943 թ. հանրապետության անասնապահների լարված աշխատանքի շնորհիվ գյուղատնտեսության այդ ճյուղը դուրս եկավ ծանր վիճակից և սկսեց վերելք ապրել։ ԽՍՀՄ Ժողկոմխորհն անդրադառնալով 1943 թ. Հայաստանի անասնապահության վիճակին արձանագրեց. «Հայաստանի կոլտնտեսականները ընթացիկ տարվա 10 ամսում հասել են անասնապահության հետագա զգալի հաջողություններ։ Անասունների գլխաքանակը ավելացել է՝ խոշոր եղջերավոր անասունները՝ 3,5 %, մանրերինը՝ 16,2 %, խոզերինը՝ 103,3 %»[23]։ Որոշման մեջ նշվում էր, որ հանրապետությունը կատարել և գերակատարել է պետական բոլոր պարտավորությունները։

Ընդհանուր առմամբ 1944 թ. հանրապետության աշխատավորները որոշակի նվաճումների հասան անասնապահության բնագավառում։ Ռազմաճակատի հաղթական երթը ոգևորել էր բոլորին։ Հանրապետությունը զգալիորեն գերակատարեց 1944 թ. համար ստանձնած պարտավորությունները, իսկ Թալինի, Տաշիրի, Ստեփանավանի, Արմավիրի, Կամոյի շրջանների աշխատողները շատ բարձր ցուցանիշների հասան։

---

22 Նույն տեղում, ֆ. 1, ց. 32, 52, թ. 64։

23 Նույն տեղում, թ. 22։

Չնայած պատերազմի տարիների ծանր պայմաններին և անասունների մթերումների բարձր պլաններին, որոնք միշտ գերակատարվում էին, հանրապետությունում անասունների գլխաքանակը տարեցտարի ավելանում էր։ ԽՍՀՄ վիճվարչության տվյալներով 1941 թ. հունվարի 1-ի համեմատությամբ Հայաստանի կոլտնտեսություններում 1945 թ. հունվարի 1-ին խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն աճել էր 11,2 հազար գլխով, մանր եղջերավորներինը՝ 19,6 հազարով, ձիերը՝ 1000-ով[24]։ Դա անշուշտ մեծ նվաճում էր։

Հայրենական պատերազմի տարիներին հանրապետությունում նոր թափ ստացավ տեխնիկական կուլտուրաների մշակումը։ Ծխախոտի, բամբակի, ճակնդեղի մշակումը կարևոր նշանակություն ուներ։ Այդ տարիներին ծխախոտի ցանքատարածությունները ավելացան մոտ 50, իսկ շաքարի ճակնդեղինը՝ 100 %-ով։ Որոշ չափով ընդլայնվեցին նաև բամբակի և վուշի ցանքատարածությունները։ Շաքարի ճակնդեղի արտադրությունը հիմնականում կենտրոնացված էր Ախուրյանի, Սպիտակի, Աջոցքի, Արթիկի և Ամասիայի շրջաններում։ 1942 թ. հանրապետության ճակնդեղագործները բարձր բերք ստացան և պատվով կատարեցին պետական պարտավորությունները։ Անընդհատ ընդլայնելով ցանքատարածությունները և բարձրացնելով բերքատվությունը, հանրապետության ճակնդեղագործները պատերազմի բոլոր տարիներին ժամկետից շուտ կատարեցին պետական մթերումները և մեծ քանակությամբ հումք հանձնեցին պաշտպանության ֆոնդին։

Ծխախոտի արտադրության ավելացումը նույնպես կարևոր էր։ Պատերազմի առաջին տարում ծխախոտի բարձր բերք աճեցրին Տավուշի, Իջևանի, Թումանյանի շրջանների տնտեսությունները, որոնք զգալիորեն գերակատարեցին մթերումների պլանները։ Իջևանում բերքատվության բարձրացման հետ մեկտեղ ընդարձակվեցին նաև ցանքատարածությունները ե համախառն արտադրանքի բարձր ցուցանիշների հասան։ Ծխախոտի մշակումը գյուղատնտեսության ամենաթույլ մեքենայացված, հիմնականում ձեռքի աշխատանքով կատարվող, բավականին ծանր և առողջության համար վնասակար տեղամասերից է, և այդ ծանրությունը հիմնականում ընկած էր կանանց և գրպրոցահասակ երեխաների ուսերին։ Պատերազմի տարիներին հանրապետությունում ծխախոտի մշակմամբ սկսեցին զբաղվել նաև լեռնային և նախալեռնային շրջանների կոլտնտեսությունները։ Եթե 1940 թ. ծխախոտի ցանքատարածությունները կազմում էին 5020 հեկտար, ապա 1945 թ. անցան 8000-ից[25]։ Հանրապետությունում մշակվող մյուս տեխնիկական կուլտուրան բամբակն էր, որի պահանջը բնականաբար շատ էր մեծացել պատերազմի տարիներին։ Չնայած հացահատիկի ցանքատարածությունների ընդարձակման հետևանքով բամբակի դանքատարածությունները նույնպես որոշ չափով կրճատվեցին (17 հազար հեկտարից պատերազմի վերջին շրջանում իջել էին 13,5 հազար հեկտարի), բարձր բերք ստանալու շնորհիվ համախառն արտադրանքը մնաց հումարյա նույն մակարդակին։

Պատերազմի բոլոր տարիներին հանրապետության կոլտնտեսությունները դյուռաոիությունը կատարեց բոլոր պետական պարտավորությունները՝ հայրենիքին հանձնելով 9 մլն փութ հացահատիկ, 4,6 մլն փութ բամբակ, 6 մլն փութ շաքարի ճակնդեղ, 1 մլն փութ ծխախոտ, 230 հազար փութ բուրդ և այլ մթերքներ[26]։ Հայրենական պատերազմի տարիներին հանրապետության թիկունքի 365 հազար աշխատողներ իրենց բարեխիղճ աշխատանքի համար պարգևատրվեցին «Կովկասի պաշտպանության համար» և «1941—45 թթ. Հայրենական մեծ պատերազմում աշխատանքային արիության համար» մեդալներով։ Դրանց կեսից ավելին գյուղի աշխատավորներն էին։

---

24 Նույն տեղում, 33, գ. 1, թ. 12։

25 Բանբեր Հայաստանի արխիվների, 1961, № 1, էջ 197։

26 ՀՀ ՀԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 33, գ. 248, թ. 16։

НАРОДНОЕ ХОЗЯЙСТВО АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ

Г. М. ГЕГАМЯН

Резюме

С первых дней войны народное хозяйство республики было перестроено для удовлетворения нужд фронта. В эти трудные годы в Армении были построены десятки новых заводов и фабрик,на несколько десятков тысяч гектаров были увеличены посевные площади, повысилась производительность труда.

Несмотря на нехватку сырья, рабочей силы, машин, работники тыла, в основном женщины и дети, с честью выполняли все государственные заказы.